ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԳԱՅԱՆԵ ՓԱՐԱՄԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՑ - 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Գայանե Փարամազյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի դեկտեմբերի 11-ից - 2026 թվականի փետրվարի 17-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակման աշխատանքային քննարկումներին, շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

1) «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծեր,

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1500-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծեր,

3) «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների լրամշակված նախագծեր:

2. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

3. Իրականացրել եմ հակակոռուպցիոն ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն ու վերլուծություն, ինչպես նաև մասնակցել եմ վերոնշյալ ոլորտին առնչվող միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված գործընթացներում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն բնագավառի օրենսդրական դաշտի կարգավորման ու կատարելագործման աշխատանքներին:

4. Կազմել եմ պետական մարմիններից, քաղաքացիներից ստացված ընթացիկ գրությունների և հարցումների վերաբերյալ պատասխաններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Գայանե Փարամազյան

17. 02. 2026թ.